

ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Արսենի Սարուխանյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին /

Մասնագիտությունը՝ ԺԲ.00.04.- Դատական իրավունք -

(դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)

Թեմայի արդիականությունը. Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման խիստ արդիական է, քանի որ վերաբերում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից մեկին՝ հաշտարարությանը, որի ավելի լայն և արդյունավետ կիրառումը միանշանակ կնպաստի Հայաստանի Հանրապետությունում արդարադատության և ՀՀ դատական համակարգի առջև ծառայած հիմնախնդրի՝ դատարանների ծանրաբեռնվածության հաղթահարմանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այս ինստիտուտը, ծագելով և զարգանալով անգոսաքսոնական իրավական ընտանիքի երկրներում և առավել տարածված լինելով այս երկրներում, ՀՀ իրավական համակարգ է ներդրվել համեմատաբար վերջերս և դեռևս չի վայելում հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչն էլ պայմանավորում է վեճերի լուծման այլընտրանքային այս եղանակի կիրառման տարածված չլինելը Հայաստանի Հանրապետությունում: Մինչդեռ, ինչպես նշվեց, վեճերի լուծման այս եղանակի տարածումը, դրա նկատմամբ հանրային վստահության բարձրացումը էականորեն կնվազեցնի դատարանների ծանրաբեռնվածությունը, հետևաբար հաշտարարության կիրառման տեսական և պրակտիկ խնդիրների վերհանումը դրանց վերաբերյալ լուծումների առաջարկումը ավելի քան կարևոր է քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության զարգացման տեսանկյունից: Բացի այդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես վերը նշվեց այս ինստիտուտը ՀՀ օրենսդրական

համակարգ է ներմուծվել համեմատաբար վերջերս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում այս ինստիտուտին նվիրված կարգավորումները նույնպես գիտական հետազոտության անհրաժեշտություն ունեն: Նման ուսումնասիրությունը հնարավորություն կտա վեր հանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի թերությունները և նպաստել ավելի կատարյալ օրենսդրություն ունենալուն:

Վերը նշվածը միանշանակ վկայում է, որ Տաթևիկ Սարուխանյանի կողմից ընտրված թեման՝ «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» խիստ արդիական է:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստճանը. հայրենական քաղաքացիական դատավարական իրավունքում հաշտարարության ինստիտուտի վերաբերյալ համապարփակ և խորը գիտական հետազոտություններ չեն իրականացվել, այն առաջին համալիր գիտական հետազոտությունն է և սույն ատենախոսության շրջանակներում հետազոտության առարկա դարձած հարցերն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Աշխատանքում տեղ գտած հեղինակի հետևությունները, որոնք վերաբերում են հաշտարարության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա իրավակարգավորումների կատարելագործմանը, հիմնված են ոչ միայն տեսական գրականության, այլև միջազգային և ներպետական նախադեպային իրավունքի և դրանց դոկտորինալ մեկնաբանությունների վրա:

Հեղինակը մեթոդոլոգիական տեսանկյունից շատ ճիշտ է ձևակերպել իր հետազոտության օբյեկտը, նպատակը և առարկան: Նպատակի իրականացումն ապահովվել է հետազոտության հիմքում դրված խնդիրներով, որոնք ըստ աշխատանքի բովանդակության ամբողջությամբ հաղթահարված են:

Հետազոտության տեսական հիմքը ուսումնասիրվող թեմային վերաբերող հայրենական և արտասահմանյան իրավագետների գիտական աշխատանքներն են, ինչպես նաև ներպետական և արտասահմանյան նախադեպային որոշումներն ու նորմատիվ իրավական ակտերը, որոնց շրջանակը բավականին լայն է:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հեղինակը միջազգային և ներպետական դատական նախադեպային իրավունքի և իրավական ակտերի վերլուծության և մեկնաբանման միջոցով առաջին անգամ կատարել է հաշտարարությանը վերաբերող հիմնահարցերի համակարգային հետազոտություն, մասնավորապես ցույց տալով այս ինստիտուտի բնութագրական գծերը և առանձնահատկությունները:

Պետք է փաստել, որ հեղինակի կողմից **պաշտպանության ներկայացված դրույթների հիմնական մասը** օժտված է գիտական նորույթով և ընդունելի է: Հետազոտվող թեմայի տարբեր ասպեկտների ուսումնասիրությունը թույլ է տվել հեղինակին անել եզրակացություններ, որոնք ունեն տեսական և գործնական նշանակություն: Մեր համոզմամբ, հեղինակին հաջողվել է լուծել այն խնդիրները, որոնք վերջինս դրել է իր առջև, և որը կնպաստի ՀՀ-ում հաշտարարության վերաբերյալ իրավական կարգավորումների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը կատարվել է տեսական և գիտագործնական կոնֆերանսներում, ամսագրերում և գիտական ժողովածուներում հրատարակված գիտական հոդվածներում, որոնք հասանելի են իրավական լայն հանրությանը:

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, որոնցում ընդգրկված են ընդհանուր 11 պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և գործնական նյութերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է թեմայի հետազոտման նպատակներին և խնդիրներին: Ատենախոսության յուրաքանչյուր մաս սերտորեն կապված է մյուսների հետ, ինչը նշանակում է, որ հետազոտվող հիմնահարցերը գտնվում են միասնական օրգանական կապի մեջ:

Աշխատանքի բովանդակությունից հետևում է, որ այն կատարված է տեսական և գործնական բարձր մակարդակով, դրանում հանդիպում ենք բավականին հետաքրքիր առաջարկությունների, որոնք այսօր օրենսդրության մեջ ամրագրելու անհրաժեշտություն

ունեն: Այսպես, արդարացի է հեղինակի կողմից <<օրենքով պահպանվող գաղտնիք>> հասկացության բնորոշումը, քանի որ այն պրակտիկայում կարող է տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ: Պետք է կարևորել նշված հասկացության բնութագրական հատկանիշների առանձնացումը և դրանց գիտական վերլուծությունը:

Աշխատանքի կարևոր արժանիքներից է այն, որ ատենախոսն անդրադարձել է վեճերի այն շրջանակին, որոնցով հաշտարարություն չպետք է կիրառվի՝ հաշվի առնելով հանրային գերակա շահի առկայությունը հաշտարարի հսկողական գործառույթների բացակայությունը և նշված համատեքստում դատական միջամտության անհրաժեշտությունը: Նման դեպքերում հեղինակն իրավացիորեն առաջարկում է վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնության առկայության պայմաններում դատարանին ընձեռել գործն ըստ էության քննելու հնարավորություն, բացառել գաղտնիության պայմանի առկայության հիմքով առանց դատարանի կողմից հաշտության համաձայնությունը հաստատելու գործի վարույթը կարճելու հնարավորությունը, ինչպես նաև բացառել նման գործերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացման պարտադիր պահանջ նախատեսելը:

Ուշադրության է արժանի նաև աշխատանքում տեղ գտած հաշտարարության դասակարգումը կամավոր, պարտադիր և հարկադիր հաշտարարության և դրանց առանձնահատկությունների վերհանումը:

Աշխատանքում հեղինակը մանրամասն անդրադարձ է կատարել հաշտարարության հասկացությանը՝ քննարկելով իրավաբանական գրականության մեջ այս ինստիտուտի առավել ընդունելի և տարածված բնորոշումները, արդյունքում տվել է հաշտարարության սեփական ուշադրության արժանի բնորոշումը:

Հեղինակն աշխատանքում իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ ներպետական օրենսդրությամբ հստակ տարանջատված չեն վեճի լուծման մինչդատական և արտադատական կարգ եզրույթները, հետևաբար փորձել է առանձնացնել այս հասկացությունները իրարից՝ գալով այն իրավացի եզրահանգման, որ հաշտարարությունը կարող է հանդես գալ և՛ որպես վեճի լուծման մինչդատական և՛ որպես արտադատական կարգ:

Արժեքավոր են նաև աշխատությունում տեղ գտած հեղինակի վերլուծությունները և եզրահանգումները հաշտարարության ընթացքում կողմերի կողմից՝ հայցի առարկայի շրջանակներից դուրս գալու հնարավորության և վեճը փոխադարձ շահերի հաշվառմամբ լուծելու վերաբերյալ եւ այն առաջարկը, որ որպես հայցային պահանջների փոփոխության թույլատրելի սահման պետք է դիտարկել այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով սկզբնապես ներկայացվել է հայցը:

Աշխատանքում կարելի է հանդիպել ուշադրության արժանի նաև այլ առաջարկությունների, որոնք վերաբերում են հաշտարարության կիրառման առանձնահատկություններին և դրա կիրառման արդյունքում ծագող խնդիրներին:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվել է բավարար տեսական գրականություն, ինչը հեղինակին հնարավորություն է տվել առանձին հարցերի վերաբերյալ կատարել բավականին խորն ուսումնասիրություն:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ աշխատանքի վերաբերյալ կարելի է կատարել մի շարք դիփոդություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Աշխատության 1-ին գլխի 2-րդ պարագրաֆում հեղինակն, անդրադառնալով հաշտարարության կիրառելիության չափանիշներին, առաջարկում է, որպեսզի դատարանը իր նախաձեռնությամբ հաշտարարության նշանակման հարց ծագելու դեպքում համակցության մեջ դիտարկի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների առկայությունը, ինչը հնարավորություն կտա դատարանին որոշել տվյալ գործով հաշտարարություն կիրառելու հնարավորությունը և նպատակահարմարությունը: Որպես հաշտարարություն նշանակելու օբյեկտիվ գործոններ հեղինակի կողմից առանձնացվում են, մեջբերում եմ՝ «սուբյեկտային կազմը (հաշտարարության կողմերը և դատավարության կողմերը պետք է համընկնեն), վիճելի իրավահարաբերության նկատմամբ հաշտարարության կիրառելիությունը (օրենսդրական արգելքի բացակայությունը), կողմերի կարգավիճակի և լիազորությունների միջև էական անհավասարակշռության բացակայությունը, օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման և միատեսակ կիրառության, իրավունքի զարգացման

անհրաժեշտությունը>> մեջբերման ավարտը: Այս առաջարկը նույնությամբ տեղ է գտել նաև ատենախոսության պաշտպանության ներկայացվող դրույթներում /պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթ/: Եթե թվարկված գործոններից առաջին երեքը, ըստ էության, վիճահարույց չեն, ապա որպես հաշտարարության նշանակման գործոն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման, միատեսակ կիրառության և իրավունքի զարգացման անհրաժեշտությունը դիտարկելը խնդրահարույց է և ընդունելի չէ: Հայտնի է, և հեղինակն էլ իր աշխատության 1-ին գլխի 1-ին պարագրաֆում նշում է, որ հաշտարարությունն ուղղված է ոչ թե գործի հանգամանքները և կիրառելի իրավունքի նորմերը պարզելուն, գործի հանգամանքների նկատմամբ այդ նորմերը կիրառելու արդյունքում պատճառաբանված որոշում կայացնելուն, այլ հաշտարարի օժանդակությամբ կողմերի բանակցությունների արդյունքում վերջիններիս միջև առկա տարաձայնության հաղթահարմանը և վեճի՝ կողմերի համար ընդունելի լուծման հանգեղը: Ընդ որում, հաշտարարության արդյունքում վեճի լուծումը շատ դեպքերում կարող է չհամընկնել այն լուծման հետ, որին կհանգեր դատարանը գործի հանգամանքները պարզելու եւ դրանց նկատմամբ իրավունքի վերաբերելի նորմերը կիրառելու արդյունքում: Հետևաբար հաշտարարությունը որևէ դեպքում չի կարող նպաստել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանմանը, միատեսակ կիրառությանը և իրավունքի զարգացմանը, իսկ հաշտարարության կիրառման օբյեկտիվ գործոն պետք է դիտարկել ոչ թե օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման, միատեսակ կիրառության և իրավունքի զարգացման անհրաժեշտությունը, այլ ճիշտ հակառակը՝ նման անհրաժեշտության բացակայությունը:

2. Ատենախոսության 1-ին գլխի 4-րդ պարագրաֆում հեղինակն անդրադառնում է հաշտարարության կամավորությանը և խոսում նաև պարտադիր հաշտարարությունից՝ որպես կամավորության սկզբունքից բացառություն: Որպես պարտադիր հաշտարարություն կիրառելու փորձ ունեցող երկրներ /նաև բացասական առումով/ հեղինակը բերում է Գերմանիայի, Իտալիայի օրինակները՝ պարագրաֆի վերջում նշելով, որ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսվել է որոշակի

իրավահարաբերությունների վերաբերյալ վեճերով դատարանի կողմից անվճար հաշտարարություն նշանակելը պարտադիր դարձնելու իրավական հնարավորություն: Համոզված ենք, որ աշխատանքը շատ ավելի կշահեր եթե հեղինակն այլ, այդ թվում նաև իր վկայակոչած երկրների փորձի ուսումնասիրման և վերլուծության արդյունքում ներկայացներ այն գործերի շրջանակը, որոնցով, իր կարծիքով, ՀՀ-ում ճիշտ կլիներ նախատեսել պարտադիր հաշտարարություն:

3. Ատենախոսության 2-րդ գլխի 2-րդ պարագրաֆում անդրադարձ է կատարվում վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ վարույթի ընթացքում հաշտարարություն նշանակելու իրավասությանը: Նշված պարագրաֆում հեղինակը գալիս է այն եզրակացության, որ նշված լիազորությունը չի բխում վերաքննիչ դատարանների՝ ՀՀ Սահմանադրությամբ կանխորոշված դատական վերանայման գործառույթից, քանի որ վերաքննիչ վարույթում հաշտարարության իրականացումը գործին մասնակցող անձանց կողմից տնօրինչականության սկզբունքի իրացման արդյունք է և ուղղված չէ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության երաշխավորման նպատակով դատական վերանայման գործառույթի իրականացմանը: Արդյունքում հեղինակն առաջարկում է հրաժարվել վերաքննիչ դատարաններում հաշտարարություն նշանակելու՝ դատավարական օրենքով նախատեսված հնարավորությունից /էջեր 79-81/: Սույն վերլուծությունը ներկայացված է նաև ատենախոսության ներածությունում՝ որպես պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթ: Մինևույն ժամանակ, ատենախոսության 3-րդ գլխի 3-րդ պարագրաֆում հեղինակը, խոսելով հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու մասին, աշխատության 162-րդ էջում նշում է, որ վերաքննիչ դատարանի լիազորությունները սահմանող ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածը չի սահմանում վերաքննիչ դատարանի՝ իր կողմից նշանակված հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու լիազորություն և առաջարկում է ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը «հաշտության համաձայնություն» բառերից հետո լրացնել «ներառյալ՝ հաշտարարության արդյունքով կնքված» բառերով: Գտնում ենք, որ հեղինակի այս երկու առաջարկությունները

տրամաբանորեն հակասում են իրար և եթե հեղինակի առաջարկով վերաքննիչ դատարանի լիազորություններից պետք է հանվի հաշտարարություն նշանակելու լիազորությունը, չի կարող այդ դատարանի լիազորությունները նախատեսող ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածում ավելացվել հաշտարարության արդյունքով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաքննիչ դատարանի լիազորությունը: Հետևաբար աշխատանքն ավելի կշահեր եթե հեղինակը վերջնական նշեր, թե որ ուղղությամբ պետք է լուծվի իր կողմից վեր հանված խնդիրը և աշխատությունում ներկայացնել վերոնշյալ առաջարկություններից կամ մեկը, կամ՝ մյուսը:

4. Ատենախոսության 3-րդ գլխի «Հաշտության համաձայնության տարրերը» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում խոսելով հաշտության համաձայնության սուբյեկտների մասին /131-134 էջեր/ հեղինակն անդրադառնում է ՀՀ ՔԴՕ 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, ըստ որի՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է՝ գործին մասնակցող անձինք չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն կամ վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը, և գալիս է այն եզրակացության, որ նշված հոդվածի և ՀՀ ՔԴՕ տնօրինչականության սկզբունքին նվիրված 12-րդ հոդվածի միջև առկա է անհամապատասխանություն, քանի որ ՀՀ ՔԴՕ 167-րդ հոդվածը խոսում է գործին մասնակցող անձանց մասին, իսկ 12-րդ հոդվածը, վեճը հաշտության համաձայնությամբ լուծելու և հաշտարարական սկսելու իրավունքը՝ որպես տնօրինչական սկզբունքի դրսևորում, ըստ հեղինակի, վերապահել է կողմերին: Արդյունքում՝ հեղինակն առաջարկում է իրավական որոշակիության ապահովման նկատառումներից ելնելով ՀՀ ՔԴՕ բոլոր այն հոդվածներում, որտեղ խոսքը վեճը հաշտարարության միջոցով լուծելու և դրա արդյունքում հաշտության համաձայնություն կնքելու մասին է կիրառել ոչ թե «գործին մասնակցող անձինք» արտահայտությունը, այլ՝ «կողմերը» եզրույթը: Հեղինակի նշված եզրահանգումների և, առավել ևս, առաջարկության հետ խսիտ դժվար է համաձայնել: Առաջին հերթին հեղինակի այն պնդումը, թե ՀՀ ՔԴՕ 12-րդ հոդվածը տնօրինչական գործողություններ կատարելու իրավասությամբ օժտել է միայն կողմերին, չի համապատասխանում իրականությանը: Իրավիճակը ճիշտ հակառակն է հոդվածում որևէ

անգամ չի օգտագործվում «կողմեր» եզրույթը, մինչդեռ հոդվածի 2-րդ մասը խոսում է գործին մասնակցող անձի կողմից իր դատավարական իրավունքները իրականացնելու, դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով տնօրինելու մասին: Հետևաբար հոդվածների անհամապատասխանության և իրավական որոշակիության խնդիր այստեղ լինել չի կարող: Բացի այդ ակնհայտ է, և հեղինակն էլ իր աշխատության մեջ նշում է, որ հաշտարարության գործընթացին մասնակցելու և հաշտության համաձայնություն կնքելու իրավունքով պիտի օժտված լինեն առնվազն վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք ևս, մինչդեռ հեղինակի առաջարկած կարգավորման դեպքում այս անձինք անհիմն կերպով զրկվում են այս գործընթացին մասնակցելու և հաշտության համաձայնություն կնքելու հնարավորությունից, իսկ հեղինակի այն պնդումը թե վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք այս իրավունքից կարող են օգտվել որպես հայցվորի իրավունքներ չի մեղմացնում իրավիճակը, քանի որ եթե նշված դեպքերում օրենսդրորեն ամրագրվեց «կողմեր» եզրույթը, դա այլ մեկնաբանում չի թողնում, քան այն, որ հաշտարարության գործընթացին մասնակցելու և հաշտության համաձայնություն կնքելու իրավունք ունեն միայն կողմերը: Արդյունքում հեղինակի առաջարկը, կյանքի կոչման դեպքում, բազմաթիվ վեճերի տեղիք է տալու և առաջացնելու է էլ ավելի մեծ շփոթ:

5. Ինչպես նշվեց սույն կարծիքում տեղ գտած թեմայի արդիականության վերաբերյալ հիմնավորումներում, հաշտարարությունը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակ, դեռևս տարածված չէ Հայաստանի Հանրապետությունում և չի վայելում հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչի մասին են վկայում հաշտարարության կիրառման դեպքերի խիստ ցածր ցուցանիշները, որոնք անգամ համեմատության եզրեր չունեն վեճերի լուծման այլընտրանքային այնպիսի եղանակի հետ, ինչպիսին է արբիտրաժը: Հետևաբար, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտի զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառը դրա կիրառման պրակտիկայի պակասն է: Մինչդեռ

ատենախոսությունում այս խնդրի վերաբերյալ գրեթե չի խոսվում: Կարծում ենք աշխատանքը միանշանակ ավելի կշահեր, եթե հեղինակը ուսումնասիրեր նշված հիմնախնդրի պատճառները, դրա հաղթահարման ուղղությամբ ՀՀ-ում իրականացվող քայլերը և առաջարկեր գործնական լուծումներ հաշտարարության նկատմամբ և՛ իրավական հանրությունում /հատկապես դատարաններում/, և՛ հասարակության լանջերտերի մոտ ավելի բարձր վստահություն սերմանելու և այս ինստիտուտի ավելի լայն կիրառելիությունն ապահովելու ուղղությամբ:

Վերը շարադրվածը մեզ հնարավորություն է տալիս գալ հետևյալ հետևության՝

1. Տաթևիկ Սարուխանյանի «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է **ԺԲ.00.04.- Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը:

2. Տաթևիկ Սարուխանյանի «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեկնածուական ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, որում լուծվել են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քաղաքացիական դատավարությունում հաշտարարության ինստիտուտի զարգացման համար: Նշված աշխատանքն առանձնանում է իր ներքին միասնությամբ, բովանդակում է նոր գիտական արդյունքներ, որոնք վկայում են քաղաքացիական դատավարության գիտության զարգացման մեջ հեղինակի ներդրման մասին:

3. Ատենախոսության նյութերն ամբողջությամբ ներկայացված են հեղինակի հրապարակումներում, որոնք հասանելի են իրավաբանական լայն հանրությանը:

Տաթևիկ Սարուխանյանի «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեկնածուական ատենախոսությունը **ԺԲ.00.04.-Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական

դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման **ԺԲ.00.04.-Դատական իրավունք** - (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

**Երևանի պետական համալսարանի
քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների
թեկնածու**



Պ. Թաղևոսյան

16.12.2022թ.

**Պ.Դ.Թաղևոսյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի դեկանի տեղակալ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**



Հ.Մ. Խաչիկյան